

«ՈՐՈ՞ՆՔ ԵՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԽՈՍՔԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ. ԻՐԱՎԱԿԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ»։ ԱՌՆՈԼԴ ՎԱՐԴԱՆՅԱՆ

04.03.2026 12:09

Արդյո՞ք փաստաբաններն իրավասու են քննադատություն ներկայացնել դատական համակարգում առկա խնդիրների վերաբերյալ, արդյո՞ք այդ քննադատությունը կարող է լինել սուր, արդյո՞ք դրա նկատմամբ պետությունը պետք է դրսևորի հանդուրժողականություն, թե՞ միջոցներ ձեռնարկի այդպիսի խոսքը լռեցնելու համար:

Ներկայացված տեսանյութում փաստաբան Առնոլդ Վարդանյանը խոսել է վերոգրյալ հարցերի մասին՝ անդրադառնալով փաստաբանների կարգավիճակին, տարիների ընթացքում ընդունված միջազգային փաստաթղթերին, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2015 թվականի ապրիլի 23-ին կայացված՝ *Morice v. France* [GC] վճռին, ներկայացնելով փաստաբանների խոսքի ազատության սահմանները, այդ թվում՝ փաստաբանների կողմից սուր քննադատություն ներկայացնելու, փաստաբանի հատուկ կարգավիճակի առնչությամբ:

Տեսանյութում ներկայացվում է նաև Մարդու իրավունքների միջամերիկյան դատարանի՝ *Alvarez Ramos v. Venezuela* գործով արտահայտված մոտեցումները՝ խոսքի ազատության գնահատման երկբնույթ՝ անհատական և սոցիալական հարթությունների վերաբերյալ և անցկացվում զուգահեռներ փաստաբանի խոսքի ազատության սահմանների հետ:

```
Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })
```